ԶԵԿՈՒՅՑ

Մարզադպրոցի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

Հարգելի ավագանու անդամներ,

Մարզադպրոցի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ուսումնամարզակ
պրոցեսն առավել նպատակային կազմակերպելու և սանիտարահիգիենիկ պատշաճ
պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշակի
փոփոխություններ մարզադպրոցի հաստիքացուցակում:

Առաջարկվող փոփոխությունները չեն գերազանցում հաստատված ընդհանուր բյուջեն և
հաստիքային միավորների քանակը, այլ ենթադրում են ներքին վերաբաշխում.

Մաքրուհու հաստիքի ավելացում.

Հաշվի առնելով Արարատ գյուղի մարզադահլիճի տարածքային ծավալները և մարզվողների
մեծ քանակը՝ առկա մաքրուհու հաստիքը բավարար չէ շենքային պայմանների պատշաճ
մաքրությունն ու հիգիենան պահպանելու համար: Ուստի առաջարկում եմ կարատեի
(թափուր/ոչ ծանրաբեռնված) հաստիքը փոխարինել մաքրուհու 1 դրույք հաստիքով:

Մարզչական հաստիքների վերաբաշխում.

Երասխ համայնքում ուսումնական պրոցեսն առավել արդյունավետ կազմակերպելու համա
առաջարկում եմ ըմբշամարտի 3 հաստիքներից մեկը կրճատել և այն հավասարապես (0.5-
ական դրույքով) բաշխել ծանրամարտի և ըմբշամարտի միջև:

Խնդրում եմ հաստատել մարզադպրոցի հաստիքացուցակում առաջարկվող
փոփոխությունները:

Զեկուցող՝

Մարզադպրոցի տնօրեն՝ **Տ.Արմենակյան**

03.09.2026թ.